

**Հայելուն նայելու համարձակությունը.
Զավեն Պիպեոյանի «Մրջյուններու վերջալույսը» վեպը
նահանջի գրականության համապատկերում**

Փիլոյան Վալերի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-111>

Հանգուցային բառեր. նահանջի գրականություն, սփյուռքահայ արձակ, Շահան Շահնուր, գլոբալացում, պոլսահայ գրական դպրոց, վիպագիր Զավեն Պիպեոյան

Ներածություն

Սփյուռքահայ գրականությունը նախկին ու ներկա կորուստների գրականություն է: Նախկին կորուստների (կարոտի) գրականությունը արդեն մարդկային-անհատական հիշողության սահմաններից դուրս է, կա ազգի հիշողության մեջ, ներկա կորուստների (նահանջի) գրականությունը, սակայն, ամենօրյա իրողություն է, և «կնահանջե լեզուն»: Կարոտի գրականության վերջապահը 1978-ին անմահության սահմանը անցած, արդեն անդենակալնի բնակիչ Հակոբ Մնձուրին է կամ ամենաերկարակյաց հայ գրագետ Հակոբ Ասատուրյանը, իսկ նահանջի վերջինը լինելու անպատեհությունը դեռ վիճարկվելու է, այնինչ առաջինը Շահնուրն է իր ամենի վեպով: Սփյուռքահայ և հայրենաբնակ տասնյակ ու տասնյակ գրող-գրագետներ են անդրադարձել ու անդրադառնում են այս ցավին, գտնում ու պատկերում նորանոր նրբերանգներ, ուժացման նորանոր մեխանիզմներ, և ահա այս ծիրում ենք փորձում դիտարկել Զավեն Պիպեոյանի ստեղծագործական բարձրակետը՝ «Մրջյունների վերջալույսը»՝ երբեմնակի այն գուգահեռելով Ռուպեր Հատտեճյանի «Առաստաղի» հետ:

Աշխատանքի նորույթը պայմանավորված է այն իրողությամբ, որ հիշատակված գործերը դիտարկվում են նահանջի գրականության թեմատիկ շրջանակներում, և որպես եղենի շարունակություն է պատկերացվում նահանջը, ինչի հաջորդ աստիճանն էլ գլոբալացումն է: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նահանջի ու գլոբալացման իրողություններն իրենց տեսանելի ու անտեսանելի հետևանքներով մերօրյա ներկայություն են, և Պիպեոյանի ու Հատտեճյանի վեպերն էլ արտահայտում են այդ տագնապը:

Հոդվածի նպատակը նահանջի ու գլոբալացման համապատկերում Զավեն Պիպեոյանի վիպասանի ստեղծագործության բարձրակետը կազմող «Մրջյուններու վերջալույսը» վեպի հիմնադրույթների ու ասելիքի բացահայտումն է, հեղինակի անվան ու գործի վերադարձը «ի շրջանս յուր»։ Կարծում ենք՝ այս խնդիրն իրագործվել է:

Ինչ վերաբերում է վերլուծության մեթոդներին ու մեթոդաբանությանը, ապա առաջնորդվել ենք սեմանտիկայի (իրականության հարաբերությունը նշանի հետ, այս դեպքում՝ մրջյուն և վերջալույս նշան-խորհրդանիշների մեկնությունը) և հերմենետիկայի ընդհանուր մեթոդաբանությամբ:

Եղենը, նահանջը և գլոբալացումը

Այսօր հայ մարդու, հատկապես սփյուռքահայի համար չափազանց էական են գլոբալացման տագնապները: Օտար մշակութային տարածքներում գոյատևող հայի համար տագնապի առիթ են արմատներից կտրվելը, անարմատ բույսի պես ապրելը՝ ամեն թեթև հովից անգամ տեղիփոխվելը, հաճախադեպ դարձող խառնամուսնությունները, ի վերջո ավելի շատին ձուլվելու, հայրենիքն ու ազգային ոգին մոռանալով օտարվելու իրողությունները: Մասնավորապես Ռուպեր Հատտեճյանի «Առաստաղի» քննությունն իրականացնելիս նշվել է. «Տարաշխարհիկ հորիզոններում նահանջում է ազգայինի պահպանման բնագոյը, հայը և հայկականը լուծվում են օտար գաղափարներին՝ ի շահ հասարակական դիրքի, սուս ֆիզի-

կական գոյության, բարեկեցիկ կյանքի: Սփյուռքի լինելության մեջ մեծ ճիգ կա, որտեղ «ապրելն» անգամ դատապարտվածության իմաստ է ստանում: Ռուպեր Հատտեճյանի վեպի հերոսի լքվածության սահմանները խորքով քննելիս՝ պոլսահայ խոշորագույն բանաստեղծ Ջարեհ Խրախունին արտահայտում է սփյուռքահայ աշխարհի տագնապների իրատես հիմքերը. «Ո՛վ է սա անկողնին մեջ անշարժ պառկող հիվանդը... Ալո՛ւ, լքո՛ւմն է, որ մահագուշակ ուրվականի մը նման հայտնված է ամենուս հորիզոնին վրա և կուգա յուրաքանչյուրիս դուռը բախելու» (*Մարմարա, 1983, 1 դեկտեմբերի):

Հարցադրումն ինքը տարողունակ է, այն դառնում է վեպի գաղափարական կովաններից մեկը: Ընդհանրացման շնորհիվ կարելի է դառնում խոսել երևույթի ազգային-գոյաբանական հատկանիշների մասին, որոնք վեպը նշանակալից են դարձնում 70-80-ական թթ. հայ վիպասանության ընդհանուր տեսադաշտում» [3, 140-141]:

Հայերեն սասցվածք կա՞ր «Կտրված հացը չի կպչում»: Սրա հանգույն՝ արմատներից կտրված բույսն էլ արմատ չի ձգում, չորանում է, կերպափոխվում: Մեկ դարից ավելի առաջ տեղ գտած եղեռնը, որ ցայսօր շարունակական է իր հետևանքներով, գլոբալացման մարտահրավերները հանգեցնում են նրան, որ հայության արմատախիլ արված (եղած) բեկորները կամ մեկուսանում, փոքրանում, ճահճանում են իրենց պատկերացրած աշխարհում, որ խեղճուկրակ ջրափոս է (հիշենք սփյուռքահայ արձակագիր Վահրամ Մավյանի «Հայու բեկորներ» շարքի կերպարներին), կամ տարրալուծվում, կերպափոխվում, ի վերջո հայությունից անէանում են՝ արդյունքում աստ և այսօր թողնելով ոչինչ, երբեմն միայն՝ աղոտ հիշողություն, բայց նահանջի և ուրացման ամենակոպ գործընթացը շարունակական է:

Ճշմարտությանն ու փաստի տրամաբանությանը նայենք սթափորեն: Եվ հիշենք, որ 20-րդ դարի հայ արձակի ամենամեծերից Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը ու սրանով սկզբնավորված գրականությունը բացահայտում են նահանջի մի շարք ճանապարհներ՝ կին և ամուսնություն (Հրաչն ու Պետրոսը), աշխատանք (Միսաքը), ալկոհոլ ու հաշիշ (Ջարեհ-Լոխումը), ինքնահասատվելու մղում (Սուրենը)... Նահանջի այլևայլ ճանապարհներ են նշում Ջարեհ Որբունու «Փորձը»՝ իր անանուն կերպարով, Վագգեն Շուշանյանն իր «Ձավեն Մանկունիի սերերը» վիպակով, Հրաչ Ջարդարյանի «Մեր կյանքը» վեպի Արսեն Տերտերյանը... Նշենք, որ սրանք վերաբերում են և ավելի բնութագրական են սփյուռքահայության առաջին սերնդին: Հաջորդող սերունդների համար «գործն» ավելի է հեշտանում:

Մի չափազանց էական ու նրբանկատ իրողություն է մատնանշում գրականագետ և տեսաբան Երվանդ Ազատյանը Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպին վերաբերող իր հոդվածում՝ խոսելով պարտություններից ամենասարսափելիի՝ մշակութային պարտության մասին, երբ ուժացումից առաջ և ուժացմանը տանող մշակութային բախումն է դրսևորվում, և արդյունքում տեսնում ենք մասնավորապես արևելյան մշակութայինների պարտությունը արևմտյան մշակույթից կամ ուղղակի պարտություն. «Ամբողջ տնաքանդ ժողովուրդ մը թափուած էր Փարիզի մայթերուն վրայ յանկուծ, և այդ յոյս քաղաքի շտապյլներուն տակ կը ճանչնար իր խոշտանգուած էուփինը և իր մերկութեամբ կը հակադրուէր հզօր մշակույթի մը. եւ առանց որ ժամանակը ունեն արինքզինք պեղէրն» ինքնաժխտումի, ինքնուրացման տառապագին գալարում մը կը պրկէր իր էուփինը. եւ ան, այդ ցաւին սաստկութեան մէջ՝ մաղձ մը կը ժայթթէր մինչեւ անգամ մեր մեծագոյն հանճարին՝ Նարեկացիին հասցէին» [1, 6]:

Ազատյանը շարունակում է. «Մշակույթների տարբերութեանց բախումը միշտ մարդկային էութեան մէջ յեղշրջումներ յառաջացուցած է.այդբախումը, որճանչցուած է անգլիական կամ ամերիկյան գրականութեան մէջ իբրեւ cultural shock կամ այլուրացում, օտարում, իր նախատիպարները ունի մեր գրականութեան մէջ» [1, 6]: Որպես եզրահանգում Ազատյանը նշում է, որ «Շահնուրի մօտ այդ հակադրութիւնը ամբողջ տարբեր աշխարհներու բախում մըն է՝ օտարումի, այլուրացման և այլասերման իր անակոթ հետևանքներով» [1, 7]:

Տազնապը շարունակվում է, տազնապն իմաստավորվում է. «Ցեղ մը ամբողջ կ'ընկղմեր իր իսկ արեան մէջ ու անոր իլեակները, բախտէն հալածական, ինքնուրացման մրրիկներուն մատնուած՝ կը տուայտէին եւրոպական ոստաններուն մէջ, ի նչպէս կրնար իր աղաղակը զայլ Շահնուրի խառնուածքը ունեցող խռովայոյզ գրագետ մը: Ան արձակեց իր աղաղակը եւ ժամանակի դատաստանին թողուց անոր մեկնաբանութիւնը: Եւ այսօր, եղեռնէն գրեթէ ինը տասնամեակ մը ետք, երբ **նահանջը համընդհանուր է ու համազգային**, «կը նահանջինք բանիւ և գործով, գիտութեամբ եւ անգիտութեամբ», երբ մանավանդ «կը նահանջէ լեզու և, կը նահանջէ լեզուն...»՝ ձեւ, կերպարանք, իմաստ կը զգենու շահնուրեան սրտապատառ աղաղակը եւ լաւագոյնս կը մեկնաբանէ «պատկերագարդ պատմութիւն հայոց» ըլլալու իր բնոյթը» [1, 7-8] (ընդգծումն իմն է՝ Վ.Փ.):

Պարզ է, որ ասելիքի ակունքը տեսակի կորուստն է, որ ասելիքը այդ կորուստի մեխանիզմներին անդրադարձնալն է, քանի որ «<...> սփիւռքի տարահալած կեանքը մահամերձի վիճակ մըն էր, ան ունեցավ իր միսիթարական լացողը՝ Շահնուրի ոչ լալկան գրականութեան ընդմեջէն:

Սակայն, այսօր, այդ կեանքը աւելի եղերական է, թէւ չկան սուր ու եաթաղան, արիւն ու սով, տարագրութիւն ու գաղթական, սակայն կա՛յ անտեսանելի ռոբերգութիւն մը, իմացական մակարդակի ռոբերգութիւն մը, որ կը մնայ միայն համապատասխան իմացականութեամբ ընկալելի ու ըմբռնելի:

<...> Շահնուրի «Պատկերագարդ պատմութիւն հայոց»ի դաժան տռամը կը շարունակուվի այսօր, առանց սգաւորի սակայն, իրարմէ անջատ, հեռաւոր գաղութներու մէջ, անձայն քանի մը արցունքներով, որոնք արդէն կը չորնան գետին չինկած՝ մեր կեանքի անպատին մեջ» [1, 10]:

Երբեմն տեղ են գտնում ինքնափնտրումն ու ինքնակայացման համառումը, բայց ավելի հաճախ կա ինքնակորստյան ավերը: Այս տեսակետից Հրանտ Մաթնոյանի ստեղծած կերպարն ախտորոշում է «համահայկական հիվանդությունը». «Ձերոնք որ փախչում են՝ իրենցից են փախչում – կարծում են գյուղից ու տեղից են փախչում, մատաղ» [8, 64]: Փախուստը մատնանշում է ինքնակորստյան տազնապը, որ իր հիմքում ոչ միայն Արևելքին բնորոշ կենսագագողության հետքեր ունի (չլինել ես, լինել մենք-ի բաղկացուցիչ. այստեղից է գալիս մարևոսյանական ստեղծագործության վերջին շրջանի կերպարաչափի կողմից մենք-ի գործածությունը), այլև օտարման փիլիսոփայությունը, որ 20-րդ դարի երկրորդ կեսի գրականության պարտադիր բաղկացուցիչ է՝ սկսած Ալբեր Կամյուի «Օտարից» մինչև Կոբո Աբե և շատ ուրիշներ: Ինքն իրենից փախչում է մի ողջ սերունդ և սերունդներ՝ դրսևորելով ինքնակորստյան տազնապը: Տեղ է գտնում «ես»-ի կորուստը, երբ փորձ է արվում արհամարհել այդ ես-ը՝ ձուլվելով այլոց մենք-ի հետ, որովհետև Սփյուռքում (նաև հայրենիքում) չկա կամ լիարժեքորեն չի դրսևորվում ազգուտեսակի մենք-ի զգացողությունը: Իսկ **«մենք» կենսատարածքը ներդաշնակ գոյության միակ հանգրվանն** է, բայց ավելի հաճախադեպ է օտարումը կամ փախուստը սեփական ինքնությունից, այլ մի հավաքականության մաս դառնալու պատրաստակամությունը, օտար կեղևի մեջ պարսկավելու պարտադրանքը կամ ձգտումը, որի արդյունքում նախկին հայը դառնում է իր նախկին Էուլյան ամենամեծ թշնամին. «Կտրատվել են ներքեղական կապերը, փրկություն է թվում փախուստը, մի այլ ցեղի, բարեկեցիկ ցեղի մեջ տարրալուծվելու գաղափարը: Հարմարավետ ու տաք անոթի փնտրտուք է: Իսկ քո անոթի վրա թքած: Քո անոթը թաղանթ է: Քո անոթի կճեպը փշրվել է, մնացել է թաղանթը: Այլոց անոթներից ջինի նման դուրս եկած հայածին պոռթկումը փառաբանում է դառնում օտարի անոթի, և ոչ թե ցեղիդ ոգու, որի պոռթկումը ավելի ուժգին էր լինելու, եթե դուրս ժայթքեր սեփական անոթից: Աշխարհաքաղաքացի՞ ես ուզում դառնալ: Աշխարհաքաղաքացին քո անոթից էլած ջինն է: Մնացյալը կենվորներ են...» [6, 184]: Կարծում է՝ այս իրողության արտահայտությունն է դառնում անտեսված (չգնահատված, չիմաստավորված) գրագետի՝ Ջ. Պիպեռյանի «Մրջիններու վերջալույսը» վեպը, որ ոչ միայն

«Նահանջի» հաջորդ աստիճանն է, այլև տեղի ունեցած(ո)յի ինքնուրույն մեկնաբանություններինց մեկը, որի մի տարբերակն էլ պոլսահայ արձակագիր Ռ. Հատտեճյանի «Առաստաղն» է, ապա «Առաստաղին միւս կողմը» պայմանաձևը, և շարունակություն էր պատկերացվելու «Առաստաղը փլա» պայմանականությունը, որը գեղարվեստական հանդերձ չունեցավ. «Առաստաղը փլա» Գ. հատորին մասին խօսվել ինձի համար ուղղակի տառապանք է, խղճի անհանգստություն, որովհետև ես վաղուց գրած պետք է ըլլայի այդ Գ հատորը: Ըսեմ, թե արդեն անոր 30-40 էջերը գրուած են եւ վերիվարոյ մնացեալներուն մասին ալ ծրագիր մը մշակուած է» [11, 21]:

Ռ. Հատտեճյանը հարցազրույցի ընթացքում մանրամասնում է. «Ա. հատորը գաւառէն Պոլիս ապաստանած անդամայոյծ մարդու մը կեանքը կը պատմէ, եւ այդ մարդուն այլեւ կը պատմուի Քանատա գաղթած աղջկան բերանով: Ուրեմն, Պոլսոյ ն. գաւառէն եկած մեր կեանքը այլեւս զացած է Քանատա: Բ. հատորը Պոլսոյ կարօտով Քանատայի մէջ ապրող հայ սերունդներու պատմութիւնն է: Իսկ Գ. հատորը այլեւս Սփիւռքի մէջ հայ բեկորներու անկումը ապրող, հայութենէ հեռանալու, իրենց հայկական ինքնութիւնը կորսնցնելու ճամբուն գտնուող, տագնապներու պատմութիւնն է <...>» [11, 21]:

Իրավացի է ուսումնասիրողը, երբ նշում է, որ ««Առաստաղը» հայ գրականության մեջ ձեռք է բերել հոգեբանական վեպի կառուցվածքային հատկանիշներ իբրև «ներաշխարհի գեղարվեստական քննություն»: Այս վեպը լուսարձակ է նետում Սփյուռքի ներկայի ու անցյալի վրա, բերում արևմտահայության վաղվա օրվա տագնապները: Առաստաղը սահմանագիծ է հայի ու ամենակող «համաշխարհի» միջև, որն անցնում ենք գիտակցելով կամ անգիտակցից» [4, 21]:

Մենք էլ չենք վարանում կրկնելու, որ «Ռ. Հատտեճյանի վեպերը ներկայի պատկերմամբ լույս են սփռում ոչ միայն այդ նույն ներկայի, այլև անցյալի վրա և միաժամանակ դառնում են տագնապի ահազանգ, ազգովի միասին մտածելու ու ելք գտնելու անհրաժեշտության վավերագիր» [14, 397]:

Հանգամանքների բերումով «Առաստաղ» եռագրությունը անավարտ մնաց, իսկ Ջ. Պիպեոյանի «Մրջիններու վերջալոյսը» մեր գրականության կայացած իրողությունն է, սփյուռքահայ վիպագրության սակավ նվաճումներից մեկը, որ շարունակում է ահազանգել նահանջը:

Շահնուրի «Նահանջը» գրվեց 1927-29-ին ու հրատարակվեց որպես թերթոն, ապա գրքի տեսքով կազմ ու շապիկ հագավ 1929-ին: Անցել է մոտ 100 տարի, և «Նահանջը», ցավոք (ասում եմ ցավոք), չի հնանում, որովհետև նահանջը շարունակական է ցայսօր: Բայց գրականությունը, թեկուզ խարխափելով կամ նպատակալաց, առաջանում է՝ հասնելով 21-րդ դարին, փորձելով համակերպվել դարի ռիթմի հետ: Դրսևորվել է նորօրյա իրողությունների համահունչ տագնապ: Այո՛: Հիշենք, ի մասնավորի, Հր. Մաթևոսյանիճիճիչը. «Հայոց մեր աստղը պայթել ու բոլոր կողմերի վրա ցրիվ է գալիս, և այդ հեռացող կրակե բեկորները քանի դեռ տեսնվում են՝ իմն են: Նրանք իմ ուժն ու կյանքն են հեռացնում: Այդպես, եթե հնարավոր է, խաչված մարմինը կնայեր վերացող հոգու ետևից» [7, 382]: Եվ անա Ջավեն Պիպեոյանի «Մրջիններու վերջալոյսը» վեպը խոսում է հոգեբանական նահանջի (ուրացման) հաջորդ աստիճանի մասին:

Ջավեն Պիպեոյանի «Մրջիններու վերջալոյսը» վեպը

Այս վեպն էլ հրատարակվել է 1970-ին «Ժամանակ» օրաթերթի էջերում «294 թերթօսներէն, որոնք հեղինակը ի մի հաւաքած, կազմել տուած և սրբագրելով մակագրած է իր գրչակից բարեկամներուն» [10, 2]: Գիրքը որոշ կրճատումներով հրատարակվել է 1984-ին՝

¹ Գրքում ներառվել է «Սփյուռք օվկիանոսը և մի մարդ.Ռուպերձատտեճյանի «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» վեպերը» հոդվածը (14, 388-397):

հեղինակի մահվան տարում, ապա Սևան Տեյիբմենջյանի աշխատավիճակում 2007-ին Ստամբուլում վերահրատարակվել է «Արաս» հրատարակչության կողմից:

Փորձեն մասնավորել՝ անդրադառնալով վեպի ֆաբուլայի ինչ-ինչ իրողությունների: Նաֆըլայից (համաշխարհային պատերազմի ընթացքում զինվորագրված այլահավատներից կազմված շինարարական ջոկատներ) երեքուկես տարվա ծառայությունից հետո վերադարձած հայ երիտասարդ Պարետը իր ընտանիքը գտնում է աղքատացած, այլ մի բնակարանում, քանի որ 1942-ին ընդունված Ունևորության տուրքի պատճառով (թրք.՝ Վարլըք), որի թիրախում այլահավատների ինչքն ու ունեցվածքն էր, սահմանափակ ժամանակահատվածում մարդիկ ստիպված էին չնչին գներով վաճառել իրենց ունեցվածքը, վճարել ունևորության տուրքը, այլապես կուղարկվեին աշխատանքային ճամբարներ, կաքտորվեին: Պարետի մանկությունն ու պատանեկությունն անցել է ապահովության մեջ, զինվորական ծառայության ընթացքում, շնորհիվ հոր՝ Տիրանի գոհողությունների, չի գրգցել որևէ էական փոփոխություն, բայց արդեն կա ներկան՝ դաժան իրականությունը, որից ուզում է փախուստ տալ՝ ապավինելով հիշողություններին. «նոր եկած ատեն, հին երգերը անգամ այնքան խոռված էին զինք» [10, 250]: Սա է պատճառը, որ անցյալից մնացած հիշատակների շարքում էական են դառնում տոհմական տունն ու հորեղբայր Տրդատը: Սակայն սրանք էլ իրենք չեն այլևս: Միջավայրում մարդիկ կան, որ հեռանում են հայությունից՝ «չընդունիր հայ ըլլալը» [10, 179], չունի ընկերներ [«Պարզ ընկեր անգամ չունէր: Դպրոցական ընկերներն իսկ դպրոցին մեջ ընկեր էին: Այնքան վարժուած չէր ընկերական կեանքի, որ մնայուն բարեկամ ունենալու անկարող էր» [10, 189]], չունի սիրած աղջիկ, ունի աշխատանք, սակայն ավելի գորավոր է աշխատանքը կորցնելու վախը, ունի որոշ կրթություն, սակայն ղեկավարում են անկիրթ ու բռի մարդիկ, որ ուրացել են իրենց ազգությունը... Ըստ էության մարդը մենակ է, որից փրկվելու միակ տարբերակ է պատկերանում փախուստը: Այս առաջին փախուստին հաջորդում է երկրորդը: Աշխատատեղից ու Լուվայից փախչելուց հետո, երբ բնականաբար փախչում է նաև վարձած կացարանից, «անդրադարձաւ, թէ արժէք մը ունէր տանիքը իրեն համար: Եւ թէ հաւանաբար վախցած էր այսօր փողոցը մնալէ» [10, 408]: Բայց սա «տեղական նշանակության» փախուստ է, երբ կարող են իրեն գտնել, ինչպես այս դեպքում նրան գտնում է հորեղբայր Տրդատը: Սրանից հետո փորձում է ինքն իրենից փախչել՝ «Ու լքեր էր ինքզինքը՝ ջանալով բթանալ» [10, 409]: Ինքն իրենից լքվել-ընդարմանալը՝ «ջանալով բթանալ»-ը, հոգեբանական վիճակ է, անհուստության արտահայտություն: Մտում է ավելի մեծ փախուստը. «Հետաքրքրութիւն չէր զգար: Ոչ մէկ բանի: Քննանալ կ'ուզէր: Կամ հեռու ըլլալ այստեղէն: Առագաստանաւեր Մարմարա կը բացուէին մուրը կոխած ատեն: Մէջը ըլլայի, երթայի, երթայի կ'ըսէր ատենօք: Բայց չէր երեսակայած տունէն փրթիլ: Հիմա աչքին առջեւ նորէն առագաստանաւ մը կար, խոշոր: Նստիլ երթալ կ'ուզէր: Ուր որ տանէր: Այլևս երբէք ցամաք չտեսնել: Միս-մինակ ըլլալ մէջը: Մերկ հորիզոններու երթալ առանց երբէք տեղ մը հասնելու» [10, 436]:

Վեպի պայմանականության մեջ էական դերակատարում ունեն մրջյուն և վերջապես հասկացությունները: Նախ՝ «մրջյունը, որ զօրութիւն չունի, բայց իր կերակուրը պատրաստում է ամռանը» (Առակներ, Լ, 25):

Յր. Մաթևոսյանն իր «Խումհար» («Կենդանին և մեռյալը») վիպակում սցենարական հայտի միջոցով հպանցիկ անդրադարձ է կատարում մրջյունների թեմային (1970 թվականի ամսագրային տարբերակում չկա, լրացվել է վերամշակումից հետո): Սակայն այս «սցենարական նախակյութի մեջ» կա կոնկրետ խնդիր. «Ես մրջյունների մասին եմ պատմում, <...>: Գերի են տանում, բանեցնում են, իսկ գերին դու մի ասա այնքան էլ մրջյուն չի, համարյա թե մարդ է – կարոտում ու ուզում է փախչել, կարոտում ու փախչում՝ զզվեցնում է, կարծես միևնույն չի թե որտեղ է պարկեր շլակակելու: Եվ բռնում ու զինվորները վիզը կծում են, մկրատը զցում ու կտրում են վիզը: <...> Գերի բանվորի վիզը՝ պահակ զինվորները: Լավ չի աշխատում, կարոտում ու փախչում է, կարոտում ու փախչում է սրիկան: Ինչի՞նչ է կարոտում – իր

հաստագլուխ եղբայրներին, իրենց նեղ փողոցներին, ջրի իրենց արահետին՝ որ գնում, իջնում, բարձրանում, ոլորվում, մասրենու արմատի տակով անցնում... Եվ որպեսզի մյուս անգամ այդ գերինները շատ էլ գուլիս չտանեն իրենց կարոտով, ոչ թե կենդանի մրջյուններ, այլ նրանց ձվերն են ավարում հաղթողները: Գալիս այստեղ ձվերից բանվորներ են ծնվում ու աշխատում են ու հավիտյան էլ չեն հասկանում, որ գերի են, որ զինվոր էին ծնվելու, որ ուրիշ տեղ է իրենց հայրենիքը» [8, 347]: Կարևորվում է հիշողության խնդիրը, և նրանից են ածանցվում մյուս բոլորը՝ ըմբոստությունը, կարոտը, փախուստը...

Իսկ ահա Ջ. Պիպեռյանի կերպարներից Տրդատը (մեր գրականության մեջ աշխարհաթողների, աշխարհից մեկուսացածների, յուրահատուկ Փոքր Մեեր-ների շարքում կարելի է դիտարկել այս Տրդատին) մրջյունների վերաբերմամբ իր սեփական ընկալումն ու գնահատությունն նույնի. «Միշտ մրջինները խորհած են: Դպրոցն կը սկսին արել տղաքը: Մրջինը իբրև տիպար օրինակ ցույց կու տան: **Մարդը մրջինի վերածել կը ջանաս:** Ես կը յաջողին այ: Բոլոր հակակրելի, տգեղ բաները մարդոց պաշտել տալու, հիպոցումի առարկայ դարձնելու մեջ վարպետ ենք իրաւ: Ես կ'ատեմ մրջինը: Կենսքիս մեջ ես ո՛չ ուզեցի, ոչ ալ կրցայ մրջին ըլլալ: Տատե՛, կրե՛, ամբարե՛, ձմեռը կեր, նորէն տատե՛, կրե՛, ամբարե՛: Ամբողջ կեանք մը: Ետքը՝ մեռիր: Բուրգեր շինե՛: Քաղաքներ, շէնքեր, գործարաններ, մեքենաներ, ճարտարաբուհետ, քաղաքակրթութիւն: Այս բոլորին ծառայե՛: Ամբողջ կեանք մը: Ետքը՝ մեռիր: Որո՞ւ համար: Ինչո՞ւ համար: Ո՞վ կ'օգտուի: Ո՞վ կը վայելէ: Չորս հոգի: Այսինքն ո՛չ ոք: Գործը գործին համար: Քաղաքակրթութիւնը քաղաքակրթութեան համար <...> Քաղաքակրթութիւն վերտեր է, աշխատեր է, մրջինի պէս ապրեր, մրջինի պէս մեռեր է: Մարդուն ճակատագիր մը տուեր ենք՝ քրտնիլ, ստեղծել, ստեղծածը չվայելէ: Չորս հոգիի քէֆին և հագար տարի ետքի յետախոյզին հաճոյքին համար մրջին ըլլալ» [10, 125-126]:

Համեմատությունն իրականացվում է հակառակ ծայրաբևեռներից. եթե Մաթևոսյանի մոտ մրջյունը մարդկային որակներով է օժտված (կարոտ, ըմբոստություն, փախուստ...), ապա Պիպեռյանի մոտ մարդուն մրջյունացնել ու գործառույթն է դրսևորվում: Սևան Տեյիր-մենջյանը կարծում է, որ «Մրջինը վեպ բերուած է Եզրվորսի յայտնի առակէն, որպէս խորհրդանիշը աշխատասիրութեան, համբերատարութեան ու բոլոր այն յատկանիշներուն, զորս հասարակութիւնը բարի ու նպաստաւոր կը նկատէ մարդուն համար՝ զայն հակադրելով ձկուտի պարապ-սարապ ու անօգուտ կեանքին» [10, 17]: Կարծում են՝ այս դեպքում ծագումնաբանությունը չէ կարևորը, այլ խորհրդանիշ ձևավորելու կարողությունը:

Գլոբալացող աշխարհում տեղի է ունենում ստանդարտացում, որի արդյունքում մարդ բանականը վերածվում է կաղապարված կենդանու՝ զերծ անհատականությունից, հույզերից ու զգացմունքներից: Չափազանց բնութագրական է այս իմաստով Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ» վեպի պայմանաձևը: Նմանօրինակ պայմանականության դեմ է ընդդիմանում Ջ. Պիպեռյանն իր վեպում, որովհետև մարդու մրջյունացումը նշանակում է զրկել նրան ոչ միայն անհատականությունից, այլև ազգային ու անհատական հիշողությունից, ազգային պատկանելությունից, ինքնությունից, ես-ից, որ ձուլվում է այլոց մենք-ին (վեպում կերպարը մեկնում և կրկին մեկնելու է Անատոլիա): Կարծում ենք՝ մեր դեպքում, ինչքան էլ գլոբալացումը համաշխարհային գործընթաց լինի, այն պիտի գիտակցվի որպես եղեռնի շարունակություն՝ իր բերած աշխարհակուլ հետևանքներով:

Ինչ վերաբերում է վերջալույս գաղափարին... Սևան Տեյիրմենջյանը, իր խորիմաստ «Յառաջաբանում» կարևորելով գաղափարի իմաստավորումը, նշում է. «Վերապրելու, տեսելու, արշալույսի մը հասնելու համար մրջինին վերջալոյս է պէտք... Հակառակ պարագային մրջինը ինքն է որ պիտի կորսուի մեջտեղներէն, պիտի ապրի վերջալույսը» [10, 20]:

Վերջալույս բառի երեք իմաստ է առանձնացնում Էդ. Ադայանն իր բառարանում. «1. Արևը մայր մտնելու և մթնշաղմ իջնելու պահը: 2. Հորիզոնի մայրամուտային վառ լուսավորությունը: 3. փիլք. Վերք, վախճան» [2, 1384]: Վեպի ընթերցումն ու ընկալումը հուշում են, որ գործ չունենք մայրամուտի կամ մայրամուտային վառ լուսավորության հետ (առաջնորդ-

վում ենք այն մտայնությամբ, որ վերջապես ու մայրամուտը նույնական չեն, չեն կարող արտահայտել մեկ է նույնական հասկացություն), այլ հեղինակը կարևորել է վերջի, վախճանի գաղափարը: Սա ոչ թե մայրամուտ է, այլ *վերջնայնյա* [2, 1386]՝ «վերջին լույս, որևէ բանի վերջին պահի լույսը», նախաավարտն ու ավարտը, որ սկզբնավորվել են եղեռնով ու շարունակական են ցայսօր: Համակարծիք ենք Ս. Դանիելյանի դիտարկմանը, թե «Վերջալույսը մահն է, կորուստը, անկումը», <...> «Վերջալույսը» նաև նյութի հաղթանակն է հոգևորի նկատմամբ» [3, 153]:

Միջանկյալ նշենք, որ չենք կարծում, որ «Վեպի գլխավոր հարցադրումը զարգանում է սոցիալական ուղղվածությամբ» [3, 149]: Այս դեպքում սոցիալականը ոչ թե ի նչ-ն է, այլ ինչ-պե ս-ը, որի միջոցով տեղ է գտնում աստիճանական նահանջը հայկական միջավայրից, հայ ինքնությունից ու, բնականաբար, լեզվից: Ի վերջո միանական չ է աղքատության պատճառով օտարվելը, չնայած մեր պատմությունը լի է նման օրինակներով:

...Հրանտ Մաթևոսյանի «Տաշքենդ» վիպակում կերպարներից Միրուն Թևիկը մտասնեռում ունի՝ տաշքենդներից հետ բերել եղբորը, որպեսզի հայրական տանը բնակեցնի: Տունը գիտակցվում է որպես հենման կետ և կենսատարածք: Իսկ ահա «Մրջյուններու վերջալույսի» Պարետը գրկվում է անգամ այդ հենման կետն ունենալու հնարավորությունից: Թարհակյան գերդաստանին պատկանող տունը (թեկուզ ավերակ) Տրդատի հորեղբոր կտակով ժառանգվելու է Պարետի կողմից, սակայն ենթադրվում են այլ տերեր՝ Տրդատի փարիզաբնակ դուստրը ու ժամանակին ունեցած կինը: Արդյունքում չկայացած տուն, չկայացած ընտանիք, հեռացող հարպագուներ ու բարեկամներ, անընկեր, մենակության տագնապ, կա հավատի, ավելի շուտ՝ անհավատության խնդիր («Պարէտ, ինչո՛ւ՝ չէր գիտեր, գոհունակութիւն զգաց, թէեւ ինք հաւատացեալ չէր: Աւելի ճիշդ՝ չէր խորհած ո՛չ հաւատացեալ, ոչ անհաւատ ըլլալ» [10, 293]), այլ իրողություններ, որոնցից հետո միակ ելքը փախուստն ու դեգերելն է: Փախուստ տանից, փախուստ ընտանիքից, փախուստ սիրած աղջկանից ու աշխատատեղից, փախուստ ..., որ ի վերջո վերածվում էս եփական ինքնությունից փախուստի, իսկ դրանից առաջ կամ հետո փախուստ է ազգային արմատներից, այլ մի մենք-ի փնտրտուք, որովհետև ըստ էության չկա իր գենետիկ-տոհմիկ մենք-ը, կա զրբալացման պարտադրանքը: Սա է նահանջի այն տրամաբանությունը, որ դրսևորվում է վիպական պայմանականության մեջ: Փաստորեն *տարատեսակ պարտադրանքներին զուսմարվում է հոգեբանական պարտությունը:*

Շահնուրը նահանջի ունիվերսալ պայմանաձև է կտակել մեզ՝ «բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ»: (Շահնուրը բառացի փոխառել է հայոց ժամագրքի Ձոջում հատվածի տողերը. «Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ Սատուծոյ»): Ու թե կան նահանջողներ, որ խոսքով ու գործով են նահանջում (գործիխակ՝ շահնուրյան Սուրենը, Պիպեռյանի Քազիմիրը («Քազիմիրին Քազեմիրեան ըսէ: Չ'ընդունիր հայ ըլլալը») [10, 179]), ապա ակամա, անգիտությամբ նահանջողներ էլ կան:

Պիպեռյանի Պարետը սովորաբար չի մտածում՝ իր ինչ-որ տեղ ծուլ էությամբ պայմանավորված: Սակայն մտածելու դեպքում տխուր եզրահանգումների է գալիս. «Հայությունը մոռցած ըլլալու էր այսչափ տարի է: Հիմա կը սկսեր վերյիշել եւ, առաջին ապշությունը փարատել է վերջ՝ հասկնալ: *Ակամայ կը մտներ նորէն հայու մորթին մէջ: Ասիկա նոր անհանգստութիւն մը կու տար իրեն: Չէր ախորժեր: Ու կ'անդրադառնար, թէ «հայ չըլլալ» նոր առաւելութիւն մըն էր:* Եվ սակայն անկարելի էր հայ չըլլալ» [10, 502-503]:

Վիպական պայմանականության մեջ, թվում է հպանցիկ, սակայն էական դերակատարություն ունեցող կերպար կա՝ Ազնիվ հանրմ Սարայկիլը, որ Պարետին մտածելու է դրդում: Վերջինս խորհում է, որ տեղի ունեցած իրողություններից հետո (չեն հիշատակվում, սակայն ենթադրվում են եղեռնը և ուշացումով ընդունված Տարագրության մասին օրենքը 1915-ի մայիսի 27-ին, 1922-ի սեպտեմբերի Լքյալ գույքի մասին օրենքը, 1936-ին ընդունված Ազգա-

յին փոքրամասնությունների համայնքապատկան կայվածքների մասին օրենքը, վիպական պայմանականության մեջ էական դերակատարություն ունեցած Վարլըքը՝ Ունևորության տուրքի մասին օրենքը՝ ընդունված 1942-ի նոյեմբերի 12-ին, որով ունեզրկեցին հայությանը՝ միաժամանակ կազմակերպելով նոր մի աքսոր՝ այս անգամ Աշքալե՝ Էրզրումի մոտ գտնվող մի գյուղաքաղաք) «<...> շատ հանգիստ էին... չէին վարժուած այս քան հանգստութեան, տեւական աղէտի մը մերձութիւնը կը կրճէր իրենց օրերը: Կը վաստկէին, կ'ուտէին, կը խմէին, կը գուարճանային: Բայց նաւաբեկութեան մը հապճեպը կար այդ ապրելուն մէջ: Ամէն վայրկեան բանի մը կը սպասէին: Խանգարումի մը: Եւ հիմա աւելի կը վախնային, քան տասը տարի առաջ: Որովհետեւ գոհ էին իրենց վիճակէն ու չէին ուզէր, որ բան մը փոխուի:

<...>

Առանց աղէտի անհանգիստ էին: Տարր մը պակաս էր իրենց կեանքին: Բանի մը կը սպասէին: Որովհետեւ չէին կրնար երեսակայել կեանք մը՝ յավերժաբար առանց աղէտի, միօրինակ ընթացքով: Տասը տարին շատ էր» [10, 503]:

Պարետը նույն միջավայրի ու ժամանակի ծնունդ է: Ինչքան էլ փախստական ապրած լինի, գոնէ ժամանակավորապէս վերադարձել է մոր և քրոջ մոտ, և փաստն այն է, որ **«Ակամայ ինքզինքը կը գտնէր հայութեան ծիրին մէջ: Կը ջղագրգռուէր ասկէ: Նոյն հիւանդութեան ախտանիշները կը յայտնուէին այս տարիքէն ետք»** [10, 503]:

Ազնիվ հանրմ Սարայկիլը դիտարկում է պոլսահայությանը բնորոշ հիվանդություններին մեկը՝ «մեր ազգային գործերն ալ նպարավաճառի հաշիւներով քալած են» [10, 504] (ճիշտ այսօրվա պէս), որ «Ասիկա Բիզանդիոնի իսկական եւ վերջնական անկումը պիտի ըլլայ» [10, 504]՝ ասել է՝ Պոլիսն ի վերջո վերածվել է Ստամբուլի:

Վիպական գործողությունները տեղի են ունենում 1945-ի և 1955-ի միջև, թվում է՝ մոտ մի հարյուրամյակի հեռավորություն կա վեպի պատկերած ժամանակից, սակայն... «Բան մը չէ փոխուած: Ամբողջ կեանքս քաղաքական միջավայրի մէջ ապրեցայ: Ատենօք եկեղեցիէ մը ճամփայ կ'ելլէին, ազգին ուսերուն վրայ կոխելով կը բարձրանային, պալատին մարդ կ'ըլլային, հարստութիւն կը դիզէին: Չիմա նորէն եկեղեցիէ մը ճամբայ կ'ելլէն, համայնքին ուսերուն վրայ կոխելով կուսակցութիւններուն մարդը կը դառնան, հարստութիւն կը դիզեն: Ինչ մուր որ ունենան [ազգին ձակտին կը փակի հարկաւ: Բայց այս ազգը սովորութիւն չունի հայելիին նայելու...» [10, 504], դրա փոխարեն միայն խոսում են՝ մոռանալով գործելու անհրաժեշտությունը. «<...> կը խոսէին փսխել տալու աստիճան: Անպայման պէտք էր, որ այս տեսակ բան մը ունենային խոսելիք, տարիներով, սերնդէտերունդ» [10, 505]:

Այս ամենից հետո տեղ է գտնում համազգային ախտանիշը, երբ «Տառապանքը կը դառնար հաճոյք, նուաստացումը՝ քաջագործութիւն, անարգանքը՝ սինիզմ» [10, 505]:

Եվ այս ամենից հետո «Ամէն մարդ կը սպասէր եւ բնական կը գտնէր, որ «բան մը ելլայ»: Բնականէն ալ անդին, անխուսափելի: Եւ կը համակերպէր, կարծես կը մաղթէր, որ ժամ առաջ ըլլայ ըլլալիքը: Ամէն մարդ անհանգիստ էր, երբ երկար ատեն բան մը չէր պատահէր: Անբնական բան մը կը գտնէր խաղաղութեան մէջ: Գուցէ ջիղերը կ'արուէին: Սեւ ամպ մը կը փնտռէր հորիզոնը, անհամբեր կը դառնար արեւը խափանուած տեսնելու: Քոլեկտիվ մագոշիզմ չէ՞ր աս: Անգիտակցորէն ինքնասպանութեան մղումով մը չէ՞ր որ իրենց ձակատագիրը անփոփոխ պահելու կամ փոխացնելու նախախնամական դերը ունէին: <...> Եւ հայութիւնը այս «տէլմէ տիպլումաթ»ներէն² դեղագիր պիտի սպասէր իր անբուժելի անձկութիւններուն» [10, 505-506]:

Ընթերցողը կարող է չհամաձայնել այս կամ այլ դրույթի հետ, անգամ մերժել վեպի ասելիքը, քանի որ իրավ դժվար է հայելուն նայելը և դեմքի մուրը տեսնելը, սակայն ավելի անպատվաբեր է մրոտ երեսով մարդամեջ մտնելը, տկլոր մեջքով կատու շալակելը՝ համազգային ցավը պատկերացնելով պարծենալիք: Թերևս սա է այն պատճառներից մեկը, որ

² Տէլմէ տիպլումաթ (թըք.) – լավագույն դիվանագետ:

տեղ է գտնում փախուստը ճշմարտությունից, փախուստը սեփական էությունից, և Պարետը ակամա, անզիտությամբ, նաև բանիվ և գործով հեռանալու է իր չձևավորված մենք-ից՝ իր ես-ը տեղավորելով այլոց մենք-ի մեջ:

Սրանից հետո կարծել, թե «Պարետը պատենշի վրա է» (Մ. Դանիելյան) [3, 153], ճշմարտությունից հեռու է թվում, որովհետև Պարետը ակամա պարտվածներից մեկն է, հոգեբանական պարտության ենթարկվածը, և այս հանգամանքը տեղավորվում է նահանջի պայմանականության ու տրամաբանության մեջ:

Այդ պարտությունն է մատնանշում վեպի վերջին՝ բնապատկեր հիշեցնող, բայց ըստ էության հոգեբանությունն ամբողջացնող պատկերը.

«Ջուրը անկենդան էր:

Աշխարհին մեկուսացած, երկինքի սեուլթեան վրայ առկախ բոլոր կարմորակ լոյսերը կը մարեին մեկիկ-մեկիկ:

Բարոյյկներ կը բարձրանային անոնց տեղ:

Ու խարոյկներն ալ կ'ընկնուզէին խաւարի մէջ: Թերակղզին կ'ընկնուէր: Հրուանդանը կ'ընկնուէր: Տեսանելի ամեն բան եւ տեսնող բոլոր աչքերը կը մարեին: Եւ ինչ որ կար երկրի վրայ՝ կը թաղուէր ընդերքին մէջ:

Եւ ալ լոյս չէր վառէր ոչ մէկ տեղ:

Առագաստանաւը անհետացաւ գնաց երկինքի ճամբէն» [10, 547]:

Զավեն Պիպեռայանի մայրամուտն ու արշալույսը կամ եզրակացության փոխարեն

Երվանդ Ագապանի արդեն հիշատակված «Աննահանջ Շահնուրը» հոդվածում դիտարկում կա. «Մփիւռը այսօր, իր այլասերման արագ ընթացքին մէջ կորսնցնելու վրայ է գիտակցութիւնը իր ազգային արժեքներուն» [1, 13]: Պատճառներից մեկն էլ այն է, որ «Մփիւռը այսօր ի վիճակի չէ տրեկ կանգնելու իր գրողներուն. մանաւանդ Շահնուրի նման հզօր տաղանդիմը» [1, 12]: Փորձենք լրացնել, որ սփյուռքն ու հանուր հայությունը ի վիճակի չէղան տեր կանգնելու իրենց գրողներին, այդ թվում նաև Զավեն Պիպեռայան գրագետին: Իսկ ցանկացած ազդեցության հետևում է հակազդեցությունը: Այդպես է կյանքի մայրամուտին տեղ գտնում այն պահվածքը, որ դրսևորվեց Զավեն Պիպեռայանի կողմից առ մեր լեզուն ու գրականությունը: Մի քանի քաղաքերում Ռ.Հատտեճյանի՝ օրագրային նշումների վրա հիմնված գրառումներից, որ ինչ-ինչ իրողություններ են պարզաբանում. «Իրահատուկ ազգային շեշտ ալ ունէին իր յողուածները, համայնքային շահերը պաշտպանելու յատուկ մերձեցում մը <...>: Մեր սերունդին համար անտոռանալի մնացած էր երկրին իշխանութիւններուն ուղղեալ յախուռն մէկ յողուածը, որ կը կրէր «Ալ կը բավէ» խորագիրը: Պիպեռեանի անունը նույնացուցած էր այդ «Ալ կը բավէ»ին հետ» [11, 138]:

«<...> մամուլի մէջ հետզհետէ պիտի հրատարակուէին անոր <Զավեն Պիպեռայանի> պատմուածքները: Այդ պատմուածքները պիտի հաւաքուէին «Օովը» խորագրեալ հատորի մը մէջ: Յետոյ պիտի գրէրերկու վեպեր՝ «Լկրտածը» եւ «Անկուտի սիրահարները»: Երկար լռութենէ մը վերջ ալպիտի հրատարակէր իր վերջին գործը, «Մրջիններու Վերջալոյսը»: Այս գործը, եւ նախորդները, իր մէջ պիտի ստեղծէին մեծ յուսախաբույթիւն: Պիտի պաղէր Հայ գրականութենէն, եւ պիտի վճռէր մինչեւ մահ անգամ մըն ալ Հայերէն չգրել» [11, 140]:

Հայերէն չգրեց (՝), սակայն հայերէն հրատարակվեց «Մրջիններու վերջալոյսը» վեպը, ըստ էության կարապի երգը և կտակը՝ ուղղված իր ժամանակակիցներին ու գալիքին:

Հատտեճյանը շարունակում է. «Պաղած էր մեր գրականութենէն, իր օրկանային բոլոր կապերը խզած էր Հայ գրականութեան հետ: Այսքան ուժեղ ու որակաւոր գրող մը, այսքան վարպետ վիպագիր մը, ձեռքերը լուացած եւ քաշուած էր հրապարակէն: <...> Որո՞ւ համար կը գրէս, քանի՞ հոգի կը կարդայ»: <...> Ան պարզապէս դառնացած էր Հայ ընթերցողին» [11, 145]: «Իր մահուան գուգաղիպեցաւ «Մրջիններու Վերջալոյս»ին շքեղ մէկ վերահրատարակութիւնը: Ատիկա ի ր վերջալոյսը եղաւ:

Կորսնցուցիկ արժեքատր գրեղբայր մը: Բայց Հայ գրականությունը վաղուց կորսնցուցած էր զինք» [11, 146]:

Մա ժամանակակցի, ակնանտեսի, ժամանակի գրական կյանքի մասնակցի խոսք է, սակայն սեփական վերլուծությունը հանգեցնում է այլ մի գնահատականի: «Չէ՞ք տեսնում իմ կերպարի և ներկայացված իրականության ողբերգությունը, տեսե՞ք այդ ողբերգությունն իմ անձի ու գործի իրացմամբ», – ասես ուզում էր ասել Ջ. Պիպեռյանն իր կենսակերպով, որ մարտահրավեր էր իրականությանը, տագնապի ճիշ: Ի դեպ, կարելի է ինչ-ինչ նման իրողություններ տեսնել Պիպեռյան մարդու և Պարետի կերպարի միջև (տարիքը, զինվորական ծառայությունը, մի քանի տարով բացակայությունը Պոլսից և այլն):

Ջ. Պիպեռյանը թերևս գիտակցաբար և իրատեսորեն էր տեսնում «Մրջինների վերջալույսը»՝ սփյուռքահայի, մասնավորապես պոլսահայի առաջ կանգնած հայ ինքնության կորստի մեծագույն տագնապը, որի արդյունքը համատուն վեպն է: Վեպն իր հրատարակության սկզբում ուշադրության չարժանացավ (մասնակի կարող ենք նկատել Ի. Աճեմյանի, Ս. Դանիելյանի [3], Մարկ Նշանյանի [7], ավելի ուշ՝ Ս. Տեյխմենջյանի [12; 13], Հովհ. Եղոյանի [4] անդրադարձները), ըստ էության չգնահատվեց նաև պոլսահայ հանրության կողմից, անգամ երբեմն միտումնավոր մոռացության տրվեց Պոլսում և հայրենիքում³: Մենակ, չհասկացված Ջ. Պիպեռյանն ըստ էության կրկնեց իր կերտած Պարետ կերպարի գործելակերպը՝ օտարվելով կամ օտարվել փորձելով հայ գրից ու գրականությունից: Հեղինակի ուրվագծվող կերպարը ոչ թե ուրացման արտահայտություն է, որ դիտարկվում է ժամանակի հետադարձությունից, այլ տեսակի զուրկացման հետ կապված տագնապի ճիշ:

Այսօր այս ընթացքը շարունակական է: Սկրոտիչ Մարկոպոլոն իր հայերեն գրքերը («Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն») գրելուց հետո շարունակեց գրել թրքերեն ու քրդերեն, Իզնա Սարըսալանն է ստեղծագործում նաև թրքերեն⁴, Վերձիհան Ջիֆլիօղլու տաղանդավոր բանաստեղծուհին է անցել թրքերենի... Էլ ավելի տագնապեցնող է այն իրողությունը, որ ոչ միայն նվազում է սփյուռքի բաղկացուցիչ պոլսահայ գաղութը, այլև պակասում է հայերենի կիրառությունը և դերակատարությունը պոլսահայության շրջանում: Նույն իրողությունն ենք տեսնում լատինաստերիկյան գաղթօջախներում, մեկ միլիոնից ավելի կազմող ֆրանսահայ գաղթօջախում:

Եվս մի գնահատություն. «Ու թող տարօրինակ չհնչի գլխավոր եզրահանգումը. «Զավեն Պիպեռյանը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ խոշորագույն վիպասաններից է: Մեղքը բոլորովին էլ հեղինակինը չէ, որ այսքան ուշացումով ենք դիմում նրան, որ ըստ էության խորհրդահայ ընթերցողը դեռ չի ճանաչում նրա ստեղծագործությունը» [3, 153]:

Ընդհանրապես հայ ընթերցողը (եթե կա նման հավաքականություն) չի ճանաչում նրա ստեղծագործությունը: Եվ հայ գրականությունը (նաև գրականագիտությունը), հուսանք, վերագտնում է իր արժանավոր գրագետ որդուն:

³ Խոսուն է Ս. Տեյխմենջյանի «Ամբաստանագիր՝ գրական մահափորձի մը առթիվ» հոդվածը, որ նախ տպագրվել է «Բագին» հանդեսի 2022-ի թիվ 3-ում և 4-ում, ապա «Մարմարա» օրաթերթի 2025-ի 20.01-ի, 27.01-ի, 3.02-ի, 10.02-ի, 17.02-ի, 24.02-ի թվերում: Նշենք, որ Գեղամ Սևանի «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1945-1985)»-ի մեջ ընդամենը մեկ նախադասություն կա՝ կապված Զավեն Պիպեռյանի ստեղծագործության հետ, որ մեջբերում ենք առանց մեկնաբանությունների. «Զավեն Պիպեռյանին եթե հաջողվել է տալ նաև մարդկային կյանքի, նրա լուսանցքից դուրս գցված հերոսների, ընդհատակի, հանուն ապրոստի միջոցների հայթայթման ստրկացնող, մարդկային արժանապատվությունը ակամա կորցրած մարդկանց իրապաշտ պատկերը, ապա մյուսների արձակում կյանքի տրտվին է, նույնքան իրավ, առօրյա կյանքը իր ուրախ ու տխուր կողմերով և ողբերգական երեսներով նաև, մի խոսքով՝ կյանքը ինչպես որ կա, նրա կենսափիլիսոփայությունը, այնուամենայնիվ, հագեցած լույսով և վաղվա նկատմամբ հավատով» (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997, էջ 313):

⁴ Հոդվածը շարադրվել է Իզնա Սարըսալանի մահից (14. 02. 2026) առաջ:

Գրականություն

1. Ազատյան Ե., Աննահանգ Շահնուրը, «Նոր-Դար», թիվ 3, 2004:
2. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976:
3. Դանիելյան Ս., Ժամանակակից պոլսահայ արձակը, Քննադատական տարեգիրք, գ. 3, Երևան, «Նաիրի» հրատ., 1991:
4. Եղոյան Հովհ., Պոլսահայ նորագույն շրջանի արձակը 1950-2000 թթ.: «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2013:
5. Հատտեճեան Ռ., Յուշատետր-15, Գրական հաւաքոյթ Սուստիյէի մեր պարտէզին մէջ, Իսթանպուլ, Մուրադ օֆսէթ, 1999:
6. Հովսեփյան Ռ., Ծիրանի ծառերի տակ, Երևան, «ԱՌՏ» հրատ., 2006, էջ 184:
7. Մաթևոսյան Հր., Ես ես եմ, Երևան, «Ոսկան Երևանցի», 2005, էջ 382:
8. Մաթևոսյան Հր., Վիպակներ, Երևան, «Նաիրի» հրատ., 1990, էջ 641:
9. Նշանեան Մարկ, Զաւէն Պիպէտեանի միջինները, Յառաջ. Միտք եւ Արուեստ, թիւ 123, 3 յունուար, 63-րդ տարի, թիւ 16653: Նույնը՝ Պիպէտեան Զ., Մրջիններու վերջալոյսը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչութիւն, 2007, էջ 557-571:
10. Պիպէտեան Զ., Մրջիններու վերջալոյսը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչութիւն, 2007:
11. Ռոպեր Հատտեճեանին հետ սիրտ-սիրտի, հատորը կազմեց, խմբագրեց եւ Յառաջաբան՝ Յակոբ Տիւնայեանի, Պոլիս, 2020:
12. Տէյիրմէնջեան Ս., Ամբաստանագիր՝ գրական մահափորձի մը առթիվ, «Բագին», 2022, 3, էջ 106-112 և «Բագին», 2022, 4, էջ 49-70, նույնը՝ «Մարմարա» օրաթերթի 2025-ի 20.01-ի, 27.01-ի, 3.02-ի, 10.02-ի, 17.02-ի, 24.02-ի թվերում:
13. Սեւան Տէյիրմէնջեանի Յառաջաբանը /Պիպէտեան Զ., Մրջիններու վերջալոյսը, Ստանպուլ, «Արաս» հրատարակչութիւն, 2007, էջ 10-21:
14. Փիլոյան Վ., Այսօր և միշտ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2023:
15. Սևան Գեղամ, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1945-1985), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997:

Мужество смотреть в зеркало:

Роман Завена Пиперяна «Закат муравьев» в контексте литературы регресса

Пилоян Валерий

Резюме

Ключевые слова: литература регресса, проза диаспоры, Шаан Шахнур, глобализация, константинопольская армянская литературная школа, романист Завен Пиперян

Армянская литература диаспоры представляет собой литературу утрат – как прошлых, так и современных. В ней постоянно присутствует мотив отчуждения от армянской идентичности: именно в этом контексте рассматривается роман «Закат муравьев» Завена Пиперяна (1921-1984). Регресс осмысливается как продолжение Геноцида, за которым следуют тревоги глобализации, в условиях которой фрагменты армянской идентичности растворяются и утрачивают национальную принадлежность в результате культурного и психологического поражения. В тексте обозначена и «общермянская болезнь» – бегство от собственной идентич-

ности и естественного жизненного пространства, тогда как пространство «мы» предстает единственным возможным локусом гармоничного существования. Все более частотным становится бегство от собственной идентичности, выражающееся в готовности – либо вынужденной необходимости – стать частью иной общности. Ярким выражением данной реальности является роман З. Пиперяна «Закат муравьев», в котором изображены этапы регресса: за первым бегством следует второе, а затем – бегство от самого себя, более радикальная форма утраты. В системе художественной условности романа ключевую роль играют понятия «муравей» и «закат». В условиях глобализирующегося мира человек превращается в стандартизированное существо, лишенное индивидуальности, а также национальной и личной памяти, растворяясь в инокультурной среде. Смотреть в зеркало и видеть на собственном лице сажу трудно, однако еще более унижительно выходить к людям с замазанным лицом, преподнося общенациональную боль как предмет гордости. З. Пиперян, по-видимому, осознанно и трезво воспринимал величайшую тревогу, стоявшую перед диаспорой, в частности константинопольским армянством, – угрозу утраты армянской идентичности.

**The Courage to look into the Mirror:
Zaven Piperyan's Novel "The Sunset of the Ants" in the Context
of the Literature of Retreat**

Piloyan Valery

Summary

Keywords: *literature of retreat, diaspora prose, Shahan Shahnur, globalization, Constantinopolitan Armenian literary school, novelist Zaven Piperyan*

Literature of the Armenian Diaspora constitutes a literature of loss – both historical and contemporary. A persistent motif within it is alienation from the Armenian identity; it is within this context that Zaven Piperyan's novel "The Sunset of Ants" (1921–1984) is examined. Retreat is conceptualized as a continuation of the Genocide, followed by the anxieties of globalization, under the conditions of which fragments of Armenian identity dissolve and lose their national belonging as a result of cultural and psychological defeat. The text also identifies a "pan-Armenian malaise": flight from one's own identity and natural living space, while the space of the "we" emerges as the only possible locus of harmonious existence. Increasingly frequent is the escape from one's own identity, manifested in a willingness – or forced necessity – to become part of another community. A vivid articulation of this reality is found in Piperyan's novel «The Sunset of Ants», which depicts successive stages of retreat: the first flight is followed by a second, and then by a flight from the self – a more radical form of loss. Within the novel's system of artistic convention, the concepts of the "ant" and the "sunset" play central roles. In a globalizing world, the individual becomes a standardized being, deprived of individuality as well as national and personal memory, dissolving into an alien cultural environment. To look into the mirror and see soot on one's own face is difficult; yet even more humiliating is to appear before others with a smeared face, presenting collective national pain as a source of pride. Piperyan appears to have consciously and soberly perceived the gravest anxiety confronting the diaspora, particularly Constantinopolitan Armenians – the threat of the loss of Armenian identity.

**Ներկայացվել է 26. 11. 2025 թ.
Գրախոսվել է 10. 02. 2026 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.**